որով թէ իր եկեղեցւոյն հաւատարիմ աւանդապահ կլինէր, և թէ իր հօտաղուրկ իշխանութիւնը մասամբ իւիք կհաստատէր։ Ի վերջոյ այս ևս կըսեմք, ինքը որ իր կոնդակը սիրոյ և խաղաղութեան յորդորանքով կվերջաւորէ, պիտի գիտնայ, ուր որ հաստակաց իրաւունքը կբռնաբարուի, այն տեղ սէրը և խաղաղութիւնը անյուսալի է։

ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ։

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԵԱՑ ԳԻՒՂՕՐԷԻՑ ՎԻՃԱԿԻՆ ՀԱՅՈՑ ՇԱՄԱԽԻՈՅ։

Սուրբ Ստեփաննոս Նախավկայի վանքն շատ տարի է որ շինված է, բայց շինութեան թուականն ջնջված լինելով անյայտ է մնում հետաքրքիրներից. ես հետաքրքրութեամբ շատ կամեցայ տեղեկանալ շինութեան սկզբան, բայց չ՝կարացի։ Թէ և արևմտեան եկեղեցւոյ դրան ճակատին շատ բարձր դրած կայը յիշատակարան, բայց ջնջված էր. նոյնպէս ևս սեղանի ճակատումն կայը դրեր անվերծանելի՝ 'ի տեղիս տեղիս կային արտաքուստ որմանց արձանագրեր, բայց 'նոքա էին վերանորոգութեան արձանագրեր՝ և ոչ թէ շինութեան. ուստի հարկ չ՝համարեցի անցուցանել 'ի գրի։

Այս վանք՝ ինչպէս որ պատմում են ամենն տեսնողներ, Մոստաֆայ Խանի ժամանակում՝ շատ հարուստ է եղած, շատ միաբան Վարդապետներ և Եպիսկոպոս Առաջնորդ է ունեցել։ Այս վերջին ժամանակումն Յոհան անուն եպիսկոպոս է ունեցել Առաջնորդ, որ շատ աշխատութիւն է ունեցել վանքի վերայ։ Այց նորա մահուանից յետոյ՝ այս վանք ընկեր է զանազան յեղափոխութեանց ներքոյ, և այնպէս կորցրել է իրան առաջվայ փառքն, հարստութիւն, և միաբանք. միայն գերեզմանաքարերն են մնացել Վարդապետաց և Եպիսկոպոսաց յաւիտենական վկայ յառաջվայ փառաւորութեան և այժմեան աւերակութեան այն սուրբ տաճարին։ Որպէս հաւաստի տեղեկացայ ես, յառաջ շատ վարելահողեր է ունեցել, բայց Հայազգի բնակիչք վանքը աւերակ լինելու պատճառաւ սեպհականել են իրանց։ Յետքանի ամ ամայի մնալոյ այս վանքին՝ խսպառ վերջին դրութեան է հասել։ Վերջին հարուածն էլ տուած են այս տաճարի շինութեան 27 և 59 տարուայ ահագին երկրաշարժն Շամախւոյ։ Այս վանքն խսպառ խարխսլված է, և իրան աչք ձգած հոգեսէր Հայազգեացն է սպասում՝ որ վերանորոգեն իրան 'ի սէր Քրիստոսի Նախավկային Սրբոյն Ստեփաննոսի։ Ես որքան որ տեսնում եմ այս սուրբ Տաճարի աւերակ լինիլն, արտասուք եմ թափում, զԱստուած եմ աղաչում, որ օգնական լինի և շարժէ Հայազգեաց սիրտը, որ այս սուրբ տաճարը նորոգեն։ Այս վանքն մի անդրանիկ վանք է Շամախու վիճակի համար։ Այս վանքումն են պարծանք ունեցած միշտ Հայեր օտար ազգաց յառաջ, և այս վանքումն է Քրիստոսի սուրբ Խաչն բարցրացած՝ փոխանակ կռոց արձանների. բայց ի՞նչ ասեմ՝ որ այժմ խսպառ հեռա-

ցել է Հայոց ազգի աչքից և սրտից։—Ուրեմն այս իմ սրտաշարժ խօսքերով կ'աղաչեմ հոգեսիրաց ազգիս, որ բարերար հանդիսանան այս վանքի շինութեան։

Սորան իսպառ ամայի չթողնելու համար՝ 7 տարի յառաջ հոգևոր Իշխանութիւն Հայոց Շամախւոյ՝ մի Երեցայ է ձեռնադրել Սարգիս անուն Միրզաբէկեան, և վանքն յանձնել է նորա պաշտպանութեան։ Այս վարդապետն որքան կարողացել է՝ իւր աշխատանքը չէ խնայել այն տաճարի համար։ Սա սկսել է նորոգել այգին, և մինչև այն աստիճան է հասցրել, որ այժմ բաւական գինի է տալիս ըստ բերման տարւոյն։ Սորան օգնական լինելով և Առաջնորդք Շամախւոյ Մովսէս վարդապետ Մաղաքեան և Գէորգ Եպիսկոպոսն Երևանցի՝ երկու սենեակ են շինել ուխտաւորաց համար, և երկու սենեակ Վանահօր բնակութեան համար։

Այս սուրբ Ստեփաննոս Նախավկայի վանքն է եկեղեցի Հայոց Սաղեան գիւղի՝ որ է 75 գերդաստան։ Նոյնպէս և եկեղեցի շրջակայ փոքրիկ փոքրիկ գիւղացւոց, Զարխուի՝ որ է 18 գերդաստուն, Փախրաքուշի՝ 12, Տուարիշէնի՝ 11, Վաջարի՝ 22, Թալիշու՝ 16, Գիւրջիլարու՝ 13։ Սաղեանու գիւղումն կան երկու քահանայք՝ տէր Խաչատուր և տէր Իսահակ Օհանեանց, որոնք հովուումեն այն գիւղացիք, և իրանց ժամերգութիւնն կատարումեն վանքի եկեղեցումն։

Այս վանքն շատ յարմարութիւն ունի ամեն տեսակաւ Ուսումնարանի և Առաջնորդարանի։ Այս տեղ լինելով միջակէտ գիւղացւոց վիճակին Շամախւոյ, Առաջնորդն տեղւոյն շատ շուտ կարող է այցելութեան երթալ իւր հօտին, և նոցա առանց նեղութեան հովուել, և հոգևոր պիտոյքը հոգալ։ Այս վանքումն էլ շատ յարմար է կառուցանել գիշերօթիկ հոգևոր դպրոց, և նորա մէջ կրթել արժանաւոր քահանայացուք գիւղացւոց և քաղաքացոց հովուելու համար։ Տեղւոյն օդն շատ առողջաբար է. ունի վանքն մի ամենապատուական աղբիւր։ Ունի իւրան շրջակայքում բաւական վարելահողեր, այգատեղիք, և պարտէզատեղիք։ Այսքիկ յարմարութիւնք շարժումեն իմ սիրտը, որ Շամախու վիճակի Առաջնորդարան փոխադրեմ 'ի Սաղեան, նոյնպէս և հոգևոր դպրոցն. բայց աշխատում են ինձ խոչընդոտն լինիլ։

Այս սուրբ վանքումն երեք օր մնացի շատ ուրախութեամբ և շատ տրտմութեամբ. ուրախութեամբ, որովհետև [illegible] կասեն [illegible] [illegible]. տրտմութեամբ, որովհետև այդ [illegible] [illegible] սուրբ վանքն տեսի քայքայված և իսպառ նորոգութեան կարօտ։ Սիրելի ընթերցող՝ կարծես թէ այս սուրբ Տաճարն ձեռներ տարածած ինձանից խնդրում էր որ սիրելի ազգիս Հայոց յայտնեմ իւրան ցաւերն և պիտանաւորութիւններն, և նոցա հրաւիրեմ՝ որ նորոգեն իւրան, և առաջին փառաց հասցնեն իւրանց փառաւորութեան և օգտի համար։

Այս վանքի Վանահօր Սարգիս վարդապետին՝ չորեքշաբաթի աւուր պահոց սուրբ Աստուածածնի՝ զկնի ճաշոյն՝ ժամ 4 ին տալով մեր հրաժարական ողջոյն, և համբուրելով սուրբ եկեղեցւոյ դուռն, գնացաք 'ի գիւղն [illegible]։

Ճանապարհն՝ որ տանէր զմեզ 'ի [illegible]-

լուծ, շատ դժուարին էր. որովհետև նա ունէր սաստիկ էջ չորս վերս տարածութիւնով մինչև Աղ-սու անուանեալ գետ -սպիտակ ջուր-*). և սաստիկ ել նոյնպէս տարածութիւնով ուղղարերձ մինչև գԳեօհլուծ: Բազում նեղութիւնով հասինք ՚ի յիշեալ գիւղն, և կարևոր այցելութիւն անելուց յետոյ սուրբ եկեղեցւոյն և ժողովրդեան՝ իջևանեցանք ՚ի տուն տեղւոյն բարեպաշտ Իշխան Խաչատրոյ. և սա շատ ջերմեռանդութիւնով պատուասիրեց զիս և իմ հետ եղած բազմութիւնն քրիստոնէական բարեպաշտութիւնով: Բնակիչք այս գիւղի թէև սակաւաւոր են, բայց շատ բարի մարդիկ են և բարի քրիստոնեայ. քանի անձինք ութսուն, և քանին հարիւր տարեկան տեսի, և շատ աւանդութիւններ՝ պատմութիւններ տեղական խաների՝ Բէկերի և Ռուսաց պատերազմի համար լսում էի նորանցից՝ ինձ հետ խօսալու ժամանակին: Տեղւոյն բնակիչք կառավարվում են վարուցանով, և ունին լաւագոյն այգիներ իրանց տների մօտ շինած: Ունին մի եկեղեցի փայտածածք, և քահանայ սեփհական տէր Յարութիւն անուն Սափարեան: Այս գիւղումն մնալով մինչև ՚ի 5 ժամն, զկնի ճաշին դիմեցաք ՚ի Գէջբլեան, որ է հինգ վերստ հեռի ՚ի Գեօհլուծէ: Վեց ժամին ժամանեցաք ՚ի գիւղն և բազմութիւնով դիմեցաք յեկեղեցին: Երեկոյեան ժամերգութիւնն կատարեցինք շատ ուրախութիւնով. և յետ ժամերգութեան՝ խօսայի պատշաճաւոր քարոզ. և այնպէս օրհնելով ժողովրդեան՝ դուրս եկայ յեկեղեցւոյ և գնացի ինձ համար պատրաստուած օթևանն ծերունազարդ Տէր Յօհան քահանայի Փիրվերդեանցի տունը: Այս գիւղն իրան ամենատեսակ բարի դրութիւնով, պտղաբերութիւնով, օդոյ պարզութիւնով Շամախու վիճակի Հայոց գիւղօրէից՝ կարելի է ասել՝ թէ առաջինն է: Սա բաղկանում է 120 հայազգի գերդաստանից. ունի շատ վարելահողեր. ունի շատ այգիք, յորոց բերի պատուական գինի. ունի եկեղեցի քարաշէն՝ օրօրոցաձև: Բայց հազար ափսո՜ս, որ այս գիւղն անիրաւութիւնով Թուրք Թաղլան Բէկի ձեռքումն տանջվումէ. ափսո՜ս, որ քրիստոնեայք գերի են այս երկրումն այլազգի անհաւատների այս քրիստոնէութեան օրհնաբանեալ քրիստոնեայ թագաւորութեանց ժամանակում:

Այս գիւղի հարկն այնքան ծանրացած էր հարկի և հասոյթի կողմից բէկին, մինչև որ բնակիչք հեծեծումէին և հառաչում, և չէին կարողանում համ նորան հարկը վճարել, համ իրանց տարեկան ապրուստն հոգալ: Ես արդարև կարեկցեցայ սոցա թշուառ վիճակին, և մխիթարեցի յուսադրելով, թէ բարերար տէրութիւնն ունի ազատել ձեզ անօրէն ՚ի ձեռքից, և թագաւորական առնել ձեր գիւղն: Մինչև շաբաթի օր նաւակատեաց սուրբ Աստուածածնի մնացինք այս գիւղն. կարգաւորեցինք, որ մի ծխական ուսումնարան շինեն այս գիւղումն, և Հայոց մանկտին դաստիարակեն նորանումն, տասն և երկու անձինք ժողովրդեան կարգելով հոգաբարձու շի-

(*) Աղ-սու (սպիտակ ջուր) նորա համար է ասվում այս հեղեղատին, որովհետև Կովկասեան սարերի սպիտակ հողերին քերելով անցնում է գետնովը, և սպիտակութիւն է տանում ջուրին. ուստի և անուանվում է Աղ-սու:

նութեան և կառավարութեան ուսումնարանին. և այսպէս ժամ հնգին ուղևորեցաք 'ի Հնդար էրէ+ Ֆաղէան գէ-ղն, որ է երեք վերստ հեռի 'ի Գիւրջևանայ։

Ճանապարհն որ հանէր զմեզ 'ի Հնդար, էր յոյժ վայելուչ, երկու կողմն այնորիկ էին աստուածատունկ պտղատու ծառեր շարուած հաւասար բարձրութիւնով, և ճանապարհորդին մի նոր ուրախութիւն էին պատճառում, և թուեցուցանում, թէ մի վայելուչ քաղաք է նա գնալու, և ոչ թէ գիւղն։ Այս ճանապարհի գեղեցկութիւնն մոռանալ տուաւ մեզ ուրիշ դժուար ճանապարհի նեղութիւններն։ Վասն զի մեք բարցրացած ահագին լերանց Կովկասու գրեա թէ կատարների վերայ՝ և ծիծաղելով փոքրիկ լերանց վերայ՝ անցնում գնում էինք մի վայելուչ և ինքնարոյս դրախտում։ Ես շատ էի ափսոսում, որ այս ճանապարհն շատ կարճ էր. վերջապէս մինչ ես զմայլած էի այն տեղի բնութեան գեղեցիկ տեսարաններով, ահա երևեցաւ ինձ եկեղեցին Հնդարայ, և լսվեց զանգակի հնչիւն։ Այս եկեղեցին օրօրոցաձև շինուած՝ տեղւոյն բնակչաց արդիւնքով իրան տեղւոյ դրութիւնով շատ հաւանական ինձ թուեցաւ։ Նա շինուած է մի միջակիտի վերայ, որ հաւասար բաժանում է հեռաւորութիւն Հնդար գիւղի երեք թաղերին։ Գիւղի թաղերն կըդտանին եկեղեցւոյ չորս կողմն եռանկիւնաձև մի մի բլրակի վերայ. իւրաքանչիւր թաղն ունի քսան և հինգ տուն Հայազգի գերդաստուն, և առանձին գերեզմանատներ։ Զարմանալի են այս գիւղի գերեզմանատունները, և աշխարհի գերեզմանատներից հնագոյն սոյա կարելի է ասել։ Այսոքիկ գերեզմանատունք շինուած են մի մի բարձրադոյն բոլորակ բլրակաց վերայ, և ծածկուած են հաւասար հաստաբան և բարձր կաղնի և ընկուզենի ծառերով դարաւոր ժամանակով. գերեզմաններն բոլոր մամուռապատկանաչագոյն մախմուրեայ վերարկուով կարծես թէ ծածկուած են։ Հ՝սա հին գերեզմաններ կան այս տեղերումն, և գրերըն էլ անվերծանելի էին ծախսուած լինելով ժամանակի հնութիւնից։ Այսոքիկ տեղիք ըստ իս լեալ են բարձունք ի ժամանակս հրապաշտութեան, և ցայսօր ի տեղւոյն բնակչաց նախապաշարեալ մտոք ասեն փէղի ոբէոց։ Մի նախապաշարմունք էլ այս է, որ ոչ ոք չի կարող այս գերեզմանատներից ծառ կտրել և տանել կամ տուն և կամ գոմանոց շինել, ըստորում ասում են՝ թէ տունը կը քանդուի և ձեռները կը թուլանայ, և տաւարների մէջ կրակ կը ընկնի և կայրէ, ինչպէս որ շատերին պատահած է մինչ այս օրս։ Տեղին գեղջ լինելով բարձր՝ շատ առողջարար է. ունի շատ լաւ այդիք, և շատ վարելահողեր, բայց ճանապարհներն՝ որ տանում է դէպ ի դաշտավայր՝ շատ դժուարին է։ Այս գիւղումն մեք իջևանած էինք Տէր Առաքել տեղական Քահանայի տանը։ Այս գիւղումն բնակուած էր երևելի Իշխանաղն Գէորգի բէկն Աւշարեանց իրան Յակոբ-Ջան բէկ որդւովն և իրան գերդաստանովն։ Այս հարիւրամեայ պատկառելի ծերունին սպասում էր մեր դալստեան շատ անհամբերութիւնով։ Ուստի և ես ինչ ժամանակ այցելութիւնն եկեղեցւոյ կատարեցի՝ գնացի տեսութեան այդ ծերունւոյն. նա ուրախութիւնից նոր մանկացած էր համարում իրան, և իրան սրտի

ուրախութիւնն անմոռանալի էր խոստովանում բերանով: Երկրորդ օրը նա ինձ ճաշ էր պատրաստել, և հրաւիրած էր Երեք-Թաղեան-Հնդար գիւղի բնակչաց. այս ծերունի բարեպաշտ իշխանն բազմած էր սեղանում պատկառելի կերպով, և ուրախութիւն էր ցոյց տալիս բազմականաց. և այն ինչ սեղան աւարտեցաւ, ես մատուցի նորին Ազնուութեան իմ շնորհակալութիւնն՝ և մեկնեցայ իմ կացարանն: Ժամ չորսին զկնի կէս աւուր տալով յիշեալ իշխանաց իմ վերջին հրաժարականն՝ դիմեցաք ի Զարքէարան գիւղն, որ հեռի է յիշեալ Հնդարէն քսան վերստաչափ:

Ճանապարհն՝ որ տանում էր մեզ Հնդարից ի Զարկեարան, անհարթ է, գիւղի մերձ տեղիք շատ քարքարոտ է. մեք շատ դժուարութիւնով հասանք այն գիւղ ժամ տասին, և իջևանեցանք Տէր Յովհաննէս Քահանայի Փիրրուստաղեանցի տանը: Այս Զարկեարան գիւղն ունի հարիւր և քսան գերդաստան. որոց կէսն պարապում է վարուցանով, և կէսն կերպասեղէն գործող արուեստիւ: Այս գիւղն դոլով լեռնային՝ ունի շատ ընկուզենիք և տանձենիք, որք բերելով պտուղ՝ յոյժ մի թեթև առևտուր են կազմում, և բնակչաց կարևոր պէտքն են հոգում: Տուն չը կայ՝ որ չունենայ ընկուզենւոյ և տանձենւոյ այգիներ: Բայց յայսմանէ՝ այս գիւղն և շրջակայ տեղերումն կան շատ հօնի և սալորի ծառեր, յորոց քաղելով չորացնում են և վաճառում: Գիւղի մէջ հարիւրամեայ կաղնի և չինարի ծառերն զարմանալի բարձրացած են, և ամեն տեսողացն զմայլեցնում են: Այս գիւղի մօտ արևմտեան կողմն կայ սառն հանքային ծծմբային ջուր [illegible] անուն, որ պատկանի աղքատ Հայազգի բնակչի միոյ Զարկեարանցւոյ: Այս տեղս յաճախում են շատ քամի ունեցող անձինք, լողանում են այն ջրումն ջերմացած տաքացրած քարով և բժշկվում են: Այս Զարկեարան գիւղումն մնացի երկու օր, և ամսոյս օգոստոսի 16-ին բարև մնայ ասելով ժողովրդեանն՝ ուղևորեցանք ի [illegible]: Այս գիւղն հեռի է Զարկեարանից 7 վերստաչափ ի հիւսիսակողմն այնորիկ. ճանապարհն շատ յաջողակ է. մեք ժամ տասնին առաւօտեան հասանք ի յիշեալ գիւղն՝ և իջևանեցանք ի տան իշխանի նոցա Աղաջանի:

Այս գիւղն շինուած է մի տափարակ սարադաշտ տեղւոջ բաւական ընդարձակ դրութիւնով. ունի հարիւրաչափ գերդաստան Հայազգի, որք կը պարապին վարուցանիւ. ունին և այգիք իրանց տների մօտումն. ունի եկեղեցի փայտածածկ կառուցեալ տեղւոյն բնակչաց արդիւնքով յանուն Աստուածածնայ, բայց խապառ զուրկ եկեղեցական զարդերից: Ես յորդորեցի տեղւոյն բնակչաց. բայցի սորպադրութիւն՝ որ գնուի մի սաղաւարտ և մի շուրջառ: Աղաջան իշխանն տեղւոյն խոստացաւ շինել տալ իւրան ծախքով մի սկիհ, և միւս ոմն Գէորգ անուն խոստացաւ գնել մի աւետարան արծաթապատ խաչիւ: Այս գիւղումն մնացի երկու օր, և կանչեցի ինձ մօտ տեսութեան Բահլեան և Բլխաան գիւղօրէից Հայերին, որոնք ոչ են աւելի քան երեսուն գերդաստան. և հոգալով նոցա կարևոր հոգևոր պէտսքն՝ արձակեցի, և օրհնելով [illegible] գիւղի ժողովրդոց՝ դիմեցի յԱ-

—անուշէն՝ որ է տասն վերստաչափ հեռի Թաւանտից: Այս գիւղից ելի ժամ երեքին զկնի ճաշին, և ժամանեցի յԱւանաշէն ի վեց ժամին: Ճանապարհն շատ յաջողակ էր և ուրախալի. վասն զի նորա շրջակայքումն կային անտառներ, որք հաճոյ էին աչաց հայելոյ: Վերջապէս ինչ ժամանակ մտեցանք գիւղին, մեզ ընդառաջ ել կալուածատէր Գասպար բէկ Թեալեանց՝ իրան Աւանաշէն գիւղի բնակիչներովն, և շատ պատուով տարաւ մեզ ուղղակի յեկեղեցին: Մեք եկեղեցումն երեկոյեան ժամերգութիւն և հարկաւոր ատենաբանութիւն աւարտելուց յետոյ՝ իջևանեցանք ի տուն յիշեալ ազնուազգի Գասպար բէկի Թեալեանց:

Այս գիւղն շատ գեղեցիկ դիրքով շինուած է արևելակողմն հովտի մէջ, որ տարածւում է երկայնութեամբ հիւսիսոյ ի հարաւ: Բնակիչք տեղւոյն են հարիւր և քսան Հայազգի դերդաստան, և պարապին վարուցանիւ: Այս գիւղի վարելատեղիք են շատ ընդարձակ և պարարտ: Այս գիւղն իրան վարելահողերովն ի միասին պատկանում են ինչպէս սեպհական կալուածք Հայազգի Գասպար բէկի Թեալեանց. բաց ի սմանէ ունի սա և այլ երեք գիւղ, Թոփիշէն, որ է երեք վերստ հեռի յԱւանաշինէն, Փաթաքլու, որ է տասն վերստ հեռի ի յիշեալ գիւղէ, և Նորշէն, որ է 15 վերստ հեռի ի նոյն գեղջէ. տարածութիւն այս չորից գիւղօրէից վարելահողոց և անտառներին լինի աւելի քան գլխուն հազար դեսեատին, և ամենն պատկանի Գասպար բէկի Թալեանց: Ունի և երկու Թահանայ Տէր Աստուածատուր Թալեանց և Տէր Գասպար Թահանայ Թալեանց ձեռնադրեալ յԻնճէն: Այս գիւղն ունի եկեղեցի քարուկրով շինած չորս սեան վերայ կամարակապ՝ բաւական ամուր: Այս գիւղն ունի և մի քարահանք, որից շատ պատուական գերեզմանաքարեր է կտրվում: Այս քարահանքն յիշեալ բարեպաշտ ծերունի Գասպար բէկն Թալեանց ընծայել է իրանց գիւղական եկեղեցւոյն՝ գրաւոր: Ունի և մի պատուական աղբիւր դարձեալ հեռի տեղից բերած Գասպար բէկի արդեամբք: Այս գիւղից ուրբաթի օրը գնացի ի Գանջաք՝ որ է երեք վերստ հեռի յԱւանաշէն գիւղէ. բայց իմ ճանապարհն փոխուեցաւ դէպ ի մի ծառաստուն բլրակ: Այս բլրակի անուն ասում էին Թալէէ. և ասում էին որ սրբի տեղ է. ես աչքով տեսի՝ որ գերեզմանատուն էր այն՝ և ոչ թէ սրբարան. ուստի հարկաւոր նկատողութիւնք անելուց յետոյ՝ դիմեցի ի Գանձակ և իջևանեցայ ի տուն իշխանի գիւղին Գաւթի, և օրն էր ուրբաթ: Ի շաբաթի աւուր պատարագ մատուցանել տուի այս գիւղի եկեղեցումն, և մխիթարեցի ժողովուրդն: Պատարագն աւարտելուց յետոյ՝ մեզ հրաւիրեց իրան տուն Բաղդասար ոմն յառաջաւոր անձն տեղւոյն, և Խաչատուր ոմն քաջագօտի անձն:

Այս ժողովուրդն ունի մեծ ջերմեռանդութիւն առ սուրբ եկեղեցին՝ գոլով գաղթեալ յԱրցախայ: Գիւղի քուչաններն շատ մաքուր են՝ գոմանոցներն գիւղի շրջակայքումն շինուած լինելով. ունի այս գիւղն եկեղեցի փայտածածք յանուն Աստուածածնի կառուցեալ արդիւնքով տեղւոյն բնակչաց. թիւ դերդաստանաց է հարիւր քսան: Ճաշից յետոյ այս գիւղից մեկնեցայ ի Թօփքիշէն, որ բաղկանայ յի-

սուն Ջայազգի գերդաստանէ, և ունի եկեղեցի կամարակապ յանուն սուրբ Աստուածածնի շինուած գիւղական ժողովըրդեան արդիւնքով ։ Ժամ հնգին զկնի ճաշին դարձեալ եկանք յՄուանաշէն, և երեկոյեան ժամերգութիւնն կատարեցինք այս գիւղի եկեղեցումն։ Ի կիւրակէի այս եկեղեցումն պատարագ մատուցաւ, և յետ աւարտման՝ գիւղական բազմութիւն դիմեցին Գասպար բէկի տուն՝ և կերակրվեցին, որովհետև նա հացկերոյթ էր պատրաստել այն և շրջակայ գիւղացւոց ի պատիւ գալստեան մերոյ այս գիւղն։ Կիրակի օրն այն տեղն ուրախութեամբ անցուցանելով՝ երկուշաբաթի աւուր՝ որ 23 էր օգոստոսի՝ տալով մեր օրհնութիւն կալուածատէր Գասպար բէկի Քալեանց և որդւոյ նորա Զումշուտ բէկի՝ օրհնելով սորա գերդաստանն և համօրէն ժողովըրդականն, յ8 ժամու առաւօտուն դիմեցի ի Գէորգավանէ ի գաւառակին Լաւհճու, որ է 7 վերստ հեռի յՄուանաշէն գիւղէ։

(Շարունակելի։)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄՈՍ ԿՈՄԵՆԻՈՒՍ ԵՒ ՆՈՐԱ «ՏԻՏԱԳԻԳԱ ՄԱԿՆԱ»

(Շարունակութիւն)

Ի·րդ ԳԼՈՒԽ։

Գիտութեանց ոճ։

Գիտութիւն կամ գիտելիք իրերի մասին ոչ այլ ինչ է, եթէ ոչ ներքին հայեցողութիւն իրերի՝ գիտութիւնները այնքան գործողների միջնորդութեամբ են ստանում, որքան գործողք կան արտաքին հայեցողութեան մէջ, այսինքն [illegible] միջնորդութեամբ, [illegible] միջնորդութեամբ և [illegible] միջնորդութեամբ։ Ներքին աչքը խելքն է. առարկան է բոլոր՝ ինչ որ կայ խելքի արտաքոյ և մէջ. իսկ ներքին լոյսն է ուշադրութիւն։ Ներքին հայեցողութիւնը՝ արտաքինի նման՝ որոշեալ եղանակով է կատարւում։

Ուստի պատանին, որ կցանկայ գիտութեան խորհուրդները իմանալ, նա պէտք է այս չորս պայմանները ունենայ, 1) նա պէտք է ունենայ մաքուր ոգեկան աչք. 2) աչքին պէտք է առարկաներ ներկայացնուին. 3) նորա մէջ պէտք է ուշադրութիւն լինի. 4) ամենայն բան պէտք է նորան այնպէս ցոյց տրուի, որ մի բանը բղխում լինի միւսից, ինչպէս որ ոճը այդ պահանջում է, որպէս զի նա կարողանայ ամենայն բան և շուտ տեսնել։

Ընդունակութիւնը, ինչպէս և ոգին, Աստուծոյ պարգև է։ Բայց մենք իշխանութիւն ունինք այդ հայելին մաքուր պահպանել։ Նորան թողտում և փճացնում են ոգւոյ ունայն պարապմունքները, որոնց ուրեմն պէտք է հեռացնել։ Մանուկին պէտք է հաղորդել այն, որ ինչ հարկաւոր և օգտաւէտ է։

Բայց որպէս զի հայելին լուսոյ շառաւիղները լաւ արձակէ, պէտք է առարկաներին պարտուպատշաճ դրութիւն տալ և լուսաւորել։ Թէև ամպը հաղիւ թէ նկատուում է. իսկ այն՝ ինչ որ պակաս է, նա բնաւ չի երևում։ Ուստի մանուկներին բնաւ չպէտք է տալ առարկաների թեթև ձևը, այլ ըստ կարողութեան նոյն իսկ առարկաները այնպէս՝ ինչպէս որ նոքա են, որպէս զի նոքա պարապեցնեն զգայարանքը և երևակայութիւնը։ Ամենայն բան պէտք է ներկայացնուի որքան կարելի է մօտկից

Պէտք է պահպանել յետագայ անգին կանոնը. ամենայն ինչ ներկայացրու արտաքին զգայարանքներին՝ տեսանելին՝ տեսողութեանը, լսելին՝ լսողութեանը, հոտառնելին՝ հոտոտելիքին, ճաշակելին՝ ճաշակին, շօշափելին՝ շօշափողութեանը, ևլն։